ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2022 թվականի N 104 - Ա

«ՎԱՂԱՏՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԱԶԴԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով, հիմք ընդունելով «Վաղատուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի 2022 թվականի հունվարի 31-ի նիստի N 9 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

«Վաղատուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Վարազդատ Խաչատրյանի հետ 2022 թվականի մարտի 4-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2024 թվականի հուլիսի 17-ը (65 տարին լրանալը), լուծելով նրա հետ 2017 թվականի մարտի 3-ին կնքված N 37 աշխատանքային պայմանագիրը:

03.03.2022

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 3
ք. Կապան